ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«14» մայիսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Գնահատող հանձնաժողովի 08 մայիսի 2024թ. նիստի N 3 արձանագրության 1-ին կետում նշված՝ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և «Լեդարմ» ՍՊԸ-ի հնարավոր փոխկապակցվածության հանգամանքը բացահայտելու համար ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն ուղղված 08 մայիսի 2024թ. N ԴԴ-3-Ե-ԴԴ/1823-24 Ե-3601 գրությանը (կցվում է) ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացվել է 13.05.2024թ. N- /25.8.1/18398-2024 գրությունը (կցվում է):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված վերոնշյալ գրության համաձայն՝ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և «Լեդարմ» ՍՊԸ-ի միջև փոխկապակցվածության առկայություն չի արձանագրվել, հանձնաժողովը որոշեց շարունակել նիստը և քննարկել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի, ֆիրմային անվանումների, մոդելների, արտադրողների անվանումների մուտքագրման (լրացման) մասին.

2.1. «Սիրրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի պահանջների համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.3-ի, իսկ եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա վերջինիս կողմից ներկայացվում է հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, մոդելը, արտադրողի անվանումը:

«Սիրրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա՝ Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտարարությունը և հրավերը գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

2.2. «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը:

«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) չեն 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ֆիրմային անվանումները, մոդելները, արտադրողների անվանումները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության վերջին նախադասությունում սխալ է նշված մասնակցի անվանումը («Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի փոխարեն նշված է «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ):

Միաժամանակ՝ վերոնշյալ դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ:

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. մայիսի 16-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«Սիրրա» ՍՊԸ-ի և «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 15-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- ԺՀ/1823-24 և-3601

« 08 » մայիսի 2024թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ Տ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մկրտչյան,

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն: «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 12.09.2023թ.-ից մինչև 12.09.2025թ., 23.09.2023թ.-ից մինչև 23.09.2025թ., 07.11.2023թ.-ից մինչև 07.11.2025թ. և 02.12.2023թ.-ից մինչև 02.12.2025թ. ժամկետներով ներառված «Լեդարմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00517511) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Երևան Ֆրունզե 13» հասցեն և «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02315393) հայտով ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված «ք. Երևան Ֆրունզե 13» հասցեն նույնն են:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, իսկ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը սահմանված է Կարգի 119-րդ կետով:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի պահանջներով՝ մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, խնդրում ենք նշված կետով սահմանված ժամկետում՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել արդյո՞ք «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն և «Լեդարմ» ՍՊԸ-ն Կարգի 119-րդ կետի իմաստով համարվում են փոխկապակցված անձինք, թե ոչ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3. Հեռ. (374 10) 201437,
(374 10) 593943
Էլ. փոստ e-register@moj.am

N- /25.8.1/18398-2024
13.05.2024 թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՆԵՂԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՄՍԱԹԻՎ
ՏԱՐԵՏՎ N Ն-7632
ԱՄՍԱԹԻՎ 13.05.24

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վարդապետյան,

Ի պատասխան 08.05.2024թ.-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն (այսուհետ՝ Գործակալություն) ուղղված Ձեր թիվ՝ ԴԴ-3-Ե-ԴԴ/1823-24 գրության՝ հայտնում եմ, որ համաձայն իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան) 13.05.2024թ.-ի դրությամբ առկա տեղեկությունների՝ «ԼԵԴԱՐՄ» ՍՊ ընկերության (գրանցման համար՝ 278.110.1311612, ՀՎՀՀ՝ 00517511, **իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փ., 27շ., բն. 56**) միակ մասնակից է գրանցված Հակոբ Հրաչիկի Կարապետյանը (անձնագիր՝ AT0631567, տրված՝ 15.01.2021թ.-ին 009-ի կողմից, ՀԾՀ՝ 3812780445, հասցե՝ **ք. Երևան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փ., 27շ., բն. 56**), բաժնեմասը՝ 100%, իսկ որպես գործադիր մարմնի ղեկավար գրանցված է՝ Նարեկ Ֆրունզիկի Մեհրաբյանը (ն/ք՝ 012724654, տրված՝ 28.04.2020թ.-ին, 009-ի կողմից, հասցե՝ **ք. Երևան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փ., 19/1շ., բն. 11**), իսկ «Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊ ընկերության (գրանցման համար՝ 269.110.1365438, ՀՎՀՀ՝ 02315393, իրավաբանական հասցե՝ **ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Ֆրունզեի 13**) միակ մասնակից և գործադիր մարմնի ղեկավար է գրանցված Լիանա Ասլանի Ջուլակյանը (անձնագիր՝ AT0358230, տրված 16.01.2020թ.-ին 009-ի կողմից, հասցե՝ ք. **Երևան, Ավան, Հովհ. Հովհաննիսյան թաղ. 27շ., բն. 24**):

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի

պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի՝ «***փոխկապակցված իրավաբանական անձինք՝*** *իրավաբանական անձինք,*

ա.) որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,

բ.) որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,

գ.) որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ ***«փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝*** *ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝*

ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները,

գ. ֆիզիկական և իրավաբանական անձինք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի՝***«փոխկապակցված ֆիզիկական անձինք՝*** *անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ գրությամբ նշված իրավաբանական անձինք՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված հիմքերով չեն հանդիսանում փոխկապակցված անձինք, Օրենքի 25-րդ կետի «գ» ենթակետի մասով Գործակալությունը տեղեկատվության չի տիրապետում:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 26-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով չեն հանդիսանում փոխկապակցված անձինք:

Օրենքի 26-րդ կետի «բ» և «գ» ենթակետերի մասով և Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի Գործակալությունը տեղեկատվության չի տիրապետում:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ նաև, որ Գործակալությունը չունի այլ լրացուցիչ տեղեկություններ կամ գործիքակազմ իրավաբանական անձանց մասնակիցների տվյալները համադրելու և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված անձանց փոխկապակցվածությունը պարզելու համար:

Սույն գրությանը կից Ձեզ են տրամադրվում իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի 2024 թվականի մայիսի 13-ի դրությամբ առկա տեղեկություն-ների համաձայն կազմված քաղվածքներ՝ «ԼԵԴԱՐՄ» և «Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ:

Առդիր՝ 2 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԼԱԼԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ**

Կատարող՝ Կարինե Հովհաննիսյան
Տեղեկատվության մշակման բաժին
Հեռ. (010) 20-14-35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2024-05-13-ին, www.e-register.am կայքից:

«ԼԵԴԱՐՄ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գրանցման համար	**278.110.1311612**
Հիմնադրման տարի	**2023**
Գրանցման ամսաթիվ	**2023-04-17**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Ստեղծման եղանակ	**Հիմնադիր(ներ)ի որոշում**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**53990340**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**00517511**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**44111612**
Էլ. փոստ	**ledarmenia.am@gmail.com**
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**ԽԱՂԱՂ ԴՈՆԻ Փ. / Շ / 27 / Բն. 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**033058800**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Տնօրեն**
Անուն Ազգանուն	**ՆԱՐԵԿ ՄԵՀՐԱԲՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿԻ**
Անձնագրային տվյալներ	**012724654 2020-04-28 009**
Հասցե	**ԽԱՂԱՂ ԴՈՆԻ Փ. / Շ / 19/1 / Բն. 11 ԷՐԵԲՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Էլ. փոստ	-

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	Բաժնեմասի նկատմամբ գրավի կամ արգելանքի մասին տեղեկություններ
ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ Անձնագիր հ/հ AT0631567 2021-01-15 տրվ. 009 ի կողմից ՀԾՀ 3812780445 Հասցե՝ ԽԱՂԱՂ ԴՈՆԻ Փ. / Շ / 27 / Բն. 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2023-04-17	100 %	1000	գրառված չեն

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2023-04-26	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2024-01-22	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2024-05-13-ին, www.e-register.am կայքից:

«Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գրանցման համար	**269.110.1365438**
Հիմնադրման տարի	**2024**
Գրանցման ամսաթիվ	**2024-01-23**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Ստեղծման եղանակ	**Հիմնադիր(ներ)ի որոշում**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**54528603**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**02315393**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**42115438**
Էլ. փոստ	**e.g777@inbox.ru**
Կայք	**-**

Գտնվելու վայրը

Հասցե	**ՖՐՈՒՆԶԵ Փ. / 13 ՇԵՆԳԱՎԻԹ 0026 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**+374 55 590111**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Տնօրեն**
Անուն Ազգանուն	**ԼԻԱՆԱ ՋՈՒԼԱԿՅԱՆ ԱՍԼԱՆԻ**
Անձնագրային տվյալներ	**AT0358230 2020-01-16 009**
Հասցե	**ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. / Շ / 27 / ԲՆ. 24 ԱՎԱՆ 0060 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Էլ. փոստ	**e.g777@inbox.ru**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	Բաժնեմասի նկատմամբ գրավի կամ արգելանքի մասին տեղեկություններ
ԼԻԱՆԱ ՋՈՒԼԱԿՅԱՆ ԱՍԼԱՆԻ Անձնագիր հ/հ AT0358230 2020-01-16 տրվ. 009 ի կողմից ՀԾՀ 7909800487 Հասցե՝ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. / Շ / 27 / ԲՆ. 24 ԱՎԱՆ 0060 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-01-23	100 %	1000	գրառված չեն

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2024-02-09	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ